


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽԻ ԳՈՐԾՈՑ

(ԳԵՏԱՇԵՆԻ ԱԿԵՏԱՐԱՆԸ)



Աւելորդ ենք համարում տալ նաեւ 14ր — 15ա. խորանների մանրամասն նկարագրութիւնը, միայն ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում սիւների կազմութեան վերայ, որ ծագումով փայտից ենք համարում, հակառակ դէպքում անհասկանալի են նրանց զարդարանքները, մանաւանդ բների վերայ: Այստեղ եւս հետաքրքրական են լուսանցքի զարդերը. 14ր-ի ներքեւի գերանի վերայ հաստատուած է ոճաւորած մի նոնենի, բունի ներքենի մասը մեծ արմաւենիկից կազմուած, որի վերայ կանգնել է մի թռչուն, վիզը ըսոնին փաթաթելով, գլուխը վեր բարձրացրել, իսկ վերեւի գերանի վերայ կանգնած է մի գեղեցիկ տքաղազ, գեղեցիկ և ոճաւորած, պոչը ուղիղ վեր բարձրացրած (պատկեր 2), պարանցին մանեակ: Իսկ 15ր-ի արտաքին լուսանցքի վերեւի գերանի ծայրին նկարած է մի նոնենի, վերան թռչուն. նոնենու տակ փոռւած է ծոպաւոր զորդ, վերան երկար և ծայրերը զարդարուն բարձրած, ուր նստած է մի պատանի և նուռագում է սազի վերայ: Նա հագել է կապոյտ կտորից, մինչեւ ծնկները հասնող բանկոն, թերքնեղ բաղադրանով, թեք բացուած կը ծագի վերայ և երկուած կարմիր կտորով: Պարանցի տակ երեւում է զարդարուն ներքնազգեստը: Գլխարկը իւր ձեռվ նման 8ր-ի վերին գերանի փարչը ձեռքին ըլունած փիզուրի գլխարկին (պատկ. 1): Մազգերը ուն են և յետելից կապուած ժապաւենի երկու ծայրերն իջած են կրծքի վերայ, ինչպէս լուսանցքի նախընթաց ֆիզուրների վերայ տեսանք:

Ներքեւի գերանի վերայ նկարուած է ծաղկած եւ կիսարաց կոկոններով նոնենի, ոճաւորած (*). Ներքենի լուսանցքում, ան-

միջապէս խորանի տակ փոքր երկաթազգութիւնը. ԱՌ օղորմեա Մարգարէին, զրչի եւ նկարչի. եւ Սոհակա ստացողի եւ ծնուղաց իւրեանց ամէն»:

Ե.

Խորաններից աւելի, որոնց ձեւակերպութիւնն այսպէս թէ այնպէս հնագոյն աւանդութիւնների հետ են կապուած, նկարչի տաղանդն ու կարողութիւնը բնորոշելու համար առանձին նշանակութիւն ունին 16ր եւ 17ա մանրանկարները: Առաջինը՝ $24 \times 18\frac{1}{2}$ սմ. մեծութեամբ, Յիսուսի մուտքն է երուսաղէմ, բայց ոչ շարլոնական ձեւակերպութեամբ, այլ ինքնուրոյն ստեղծագործութեամբ (պատկեր 3): Երուսաղէմը եւ տաճարը պատկերաւորած է զմբեթազգարդ, երկյարկանի, բարձր չենքով, պատուած ատամնաւոր պարսպով և մեծ զարպասով, զիսին վանդակազմարդ մի պատըշգամբ: Դրան բացուածքը քառանկիւնի է, կամարաձև ճակատով, կամարակալ քարի վերայ հազիւ նկատելի կերպով զրուած. «Եմ. քաղաք»: Դրան, ինչպէս և բացուածքի վերին ճակատը ատամնաւոր զարդ ունին: Պարսպի ներսից՝ վեր է բարձրանում կրկնայարկ չենքը, զիսին ազատ սիւների վերայ հանգչող զմբեթով, թմբուկը բուռակ, իսկ վեղարը կողաւոր. զմբեթի ծայրի բոլորակ գնդի վերայ հաստատուած է քառաթեւ սոկեզօծ խաչ:


Մուտքի մօտ կանգնած է մի պատկանալի ծերունի և նրա առաջ մի մանկահասակ պատանի, որ կարմիր զգեստ է փոռւմ Յիսուսի առաջ: Ծերունին հազել է խաղարաննան մինչեւ ոտները հասնող երկար վերնազգեստ, չեղակի բացուած կրծքի վերայ, ապս ուղղակի իջած մինչեւ ոտքերը. վերնազգեստի կտորի երկիրը զեղնաւուն է վերոն ծաղիկներով, բացուածքի շրթունքները երիզուած կարմիր կտորով:

(*) Լուսանցքի զարդերի եւ փիզուրների մանրամասնութիւնը տե՛ս եւ պատկ. 2, միջին շարքը վերից վար:

Ոտքերին կարմիր, անկրունկ հօշիկ ունի, իսկ գլխին՝ կարմիր և սպիտակ կառից ոլորուն թեթև չալմայ, փաթոյթ կտորների ծայրերը կախուած յետից: Այս հազուսաւը շատ է յիշեցնում Գաղիկ Ա. և Ամբատ Բ. ու Գուրգէն Բաղրատունի թագաւորների զգեստաւորութիւնը, առաջինը Անիում՝ Գաղիկաշեն տաճարի արձանի համեմատ(*), իսկ միւսները Հաղբատի արևելեան պատին, իսկ, գրեթէ, բոլորովին նման է

դել է կանաչ և զօտեսրած պարեզօտ, որ մինչեւ ոտներն է հասնում. հազել է կարմիր կօշիկներ: Դլուխը բաց է, զանգուրներով ծածկուած. զիրքը քիչ կորացած, որովհետեւ երկու ձեռքին բռնել է մի կարմիր բաճկոն և փոռւմ է Յիսուսի առաջ: Իշխ ոտքերի տակ փոռւած է մի ուրիշ բաճկոն և ձիթենու ձիւղեր, էշը զլուխը խոնարհցրած, հոտոտում է փոռւածքը:

Յիսուս նստել է իշխ վերայ, երկու




(պատկեր 2)

Հեթում Սեւաստոսի բժշկաբանի (Երուս. N. 370) բժիշկների հազուսաւին: Դէմքը, աչքերն ու յօնքերը կանոնաւոր, այտերի կեղրոնը թեթև կարմիր, որ մեր նկարչի սիրած ձեւն է, մորուքն սպիտակ և սուր զիրջաւորութեամբ: Երկու ձեռքին բռնել է ձիթենու ձիւղեր:

Դրան չէ լքին, ձերունու առաջ, կանգնած է մանկահասակ պատանին. նու հա-

ոտքերը միեւնոյն կողմը դարձրած. հազել է կարմիր տունիկայ մինչեւ մերկ սաները հասնող, զորա տակից մի ուրիշ նեղ թեղանիքով, որ զարդարուն է կամ ծաղկաւոր բազուկների մօտ և միայն այդ մասն է երեւում. ուսերին ձգել է և մէջքում փաթաթել՝ փէշերը կապոյտ եւ բարոկ վերնազգեստ: Աջ ձեռքը մնկնել է և խաչակնքում է, իսկ ձախին մագաղաթի փաթոյթ ունի բռնած: Մորուքը կարճ է և երկճիւղ, բիսերը չափաւոր, աչքերը հեռուն ուղղած, զիլսի մազերը ճակատից երկուսի բաժանուած, աջ և ձախ, որ չա-

(*) Տես Հացունի, Պատմ. Հայ Տարաղին, վեհափեկ, 1923, եր. 181 և 179. այստեղ պատկ. 14 և 15:



(պատկեր 3)

փաւոր երկարութեամբ իշնում են մինչեւ ուսերը։ Գլխի չաւրջը բոլորակ, գեղին, խաչազարդ մեծ նիմքում։ Յիսուսի յետեւից ընթանում են երկու հոգի, մէկը գեղին մեծ նիմքուսով և զորչ, արեխառն բոլորակ միբուքով, որ Պետրոսն է, կարմիր վերնազգեստով։ Միւսը առանց նիմքի, սեւ մազերով և մորուքով, ձեռքը ազօթողի նման բարձրացրած, երեխ, ժողովրդի ներկայացուցիչ։ Պատկերի յետեւի տարածութեան երկու կողմից մի մի ձիթենի, բուները ողորկ և բարձր։ Երեւում է որ Նկարիչը ձիթենի չէ տիսել, տաճարին մօտ ձիթենու բունին երկու ոտքով փաթաթուել է մի փոքր մարդ, գէմքը փչացած, երկու ձեռքերը տարածել է ազօթողի նման, բայց մատների մէջ ձիթենու մի մի փոքրիկ ճիւղ բանած։ Նա հագել է մարմնին պլուած բաճկոն, նեղ անզրավարտիկ և անկրունկ կօշիկներ։ Դէմքը փչացած է։

Նոյն ծառին՝ աւելի բարձր ճիւղերի վերայ երեւում են երկու ֆիգուրներ։ Գոցանից մէկը մի ձեռքով բունել է ձիթենու ճիւղը, միւսով տապարը ձեռքին՝ կտրատում է եւ ցած թափում։ Նա հագել է կարմիր բաճկոն մինչեւ ոտները համուզ, զօտեւորած, և ապա նեղ անզրավարտիկ, ներքեւի մասը սեղմ եւ կզրները զարդարուն։ Թեւերի վերայ բազպաններ։ Մի այլ երիտասարդ երեսը զարձրել է դէպի ճախ եւ ձեռքը մեկնած, խօսում է երկու մաշտազահաս աղջիկների հետ, որոնք նոյնապէս ձեռքները նրան են մեկնել, խօսելու շարժումով։ Մի երրորդ կին զանւում է սիւնազարդ գմբեթի տակ, չէնքի վերնայարկում, ձեռքերը ծածկած վերնազգեստի փէշերով, ձիթենու ճիւղ է բըռնել։ Կանանց հագուստի ամբողջութիւնը չի երեւում, բայց զլիսի և կրծքի մասերը պարզ են։ Երկու մատաղահաս աղջիկները, որոնք խօսում են երիտասարդի հետ, զլիսներին ունին թեթեւ և բոլորակ զօտիկ, զլիսի յետեւի կողմից բարակ շղարչ ձգած, որ կտպուած է թիթեատիկ յետեւի կողմից։ զօտիկի զագալին էլ զարդարուն։ Երեւում են նրանց ներքնազգեստի նեղ թեւերը, բազիկի մօտ աւելի սեղմուած։ Ներքնազգեստի վերայից ձգուած է բարակ և արձակ վերնազգեստ։ Գմբեթի տակի կինը

զլիսին նոյն զօտիկն ունի։ Միայն պարանոցի տակից կտպուած է մի լաթով, իսկ լաչակն իջնում է ուսերի վերայ։ Աղջիկների զլիսի կտպն ու զարդը յիշեցնում է կեռն Գ.ի և Կեռանի աղջիկներին, միայն ոչ նոյնչափ չքեզ, կամ նման է ներկայումս Ախալցիսայի եւ աւելի մօտ Փամբակի կանանց զլիսի զարդարանքին։ Նոյնն է եւ բռնաւորի կնոջ Տղատիկնոջ զլիսի զարդարանքը, որ հրատարակել է Հացունին իւր Հայ Տարագի մէջ, եր. 218 եւ մինք Բղնատիսու Մանրանկարիչ եւ Շոթոռկանց Տոհմը աշխատութեան մէջ (Սիոն, 1933, եր. 274)։ Ծառի վերայից աղջիկների հետ խօսող երիտասարդը ճիշդ նոյն զգեստն ու կօշիկներն ունի, ինչ որ ձեռկ բերող Շերինիկն ունէր, միայն առանց զլիսարկի և կողքից կտիսուած թաշկինակի, ասել է, թէ որոշ զասի երիտասարդներին յատուկ զգեստ էր այդ։ Երկորդ ձիթենու վրայ եւս մի պատանի է բարձրացել եւ կացնով ճիշդեր է կտրատում։ Նա հագել է մինչեւ զօտին հասնող ելակ։ Նորու տակից ծալքաւոր բաճկոնակ, որ մինչեւ ծնկներն է համուում, տպա նեղ եւ կարմիր անզրավարտիկ, ոլոքների մօտ սեղմ եւ զարդարուն, զուցէ և փաթթանով պատած։ ոտքերը անկրունկ եւ առանց ճիտկի կօշիկ, զուցէ տրեխ։

Ամբողջ մանրանկարն առնուած է զընզակների շարքից բազկացած և երկու գծով եղերուած շրջանակի մէջ։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈ. ՅՈՎՈՒՔԵԱՆ

(Շարունակելի)



ԽՈՐՃՈՒՐԴ ԵՒ ԽՋԱԳ

Մարդը կենդանիկն ու տունկին բաներ մը ունի իր մէջ։ ի՞նչպիս ուրանալ տիկիւ, Բայց անոնց վրայ կ'աւելցնէ անիկա բանականութիւնը, բարոյական պատուրիւնը, անշահանդիր սերը, արունասը, բանասենդուրիւնը, զիսուրիւնը, կրօնական զգացումը։ Անոր բընուրիւնը բոյլ կուտայ իրեն դահնազու անոնւնը՝ ասուածայինը, զաղափարականը, ձգելու կատարելուրեան եւ տենչազու անմահուրեան։